



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստանդարտների ազգային ինստիտուտի 2017թ.  
գործունեության վերաբերյալ

Տնօրեն՝ ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

փետրվար, 2018



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>2</b>
<b>1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b> .....	<b>7</b>
1.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ .....	<b>7</b>
1.2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ .....	<b>8</b>
1.3. ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	<b>8</b>
<b>2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ</b> .....	<b>16</b>
2.1. ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ .....	<b>16</b>
2.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	<b>16</b>
2.3. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ.....	<b>17</b>
<b>3. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ</b> .....	<b>20</b>
3.1. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ.....	<b>20</b>
3.2. ՍՆՆԴԻ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ .....	<b>20</b>
3.3. ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ .....	<b>20</b>
<b>4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ</b> .....	<b>22</b>
4.1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	<b>22</b>
4.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ .....	<b>23</b>
<b>5. ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐԻ ՁԱԿԵՐՊՈՒՄ և ԳՐԱՆՑՈՒՄ</b> ... ERROR! BOOKMARK NOT DEFINED.	
<b>6. ՍԱԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</b> .....	<b>25</b>

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ**  
**2017թ. գործունեության վերաբերյալ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է: Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների ու ծախսերի նախահաշիվ և բանկային հաշիվ:

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ինստիտուտ) գործունեությունն ընդգրկում է 4 հիմնական ոլորտներ՝ ստանդարտացման աշխատանքներ, համապատասխանության հավաստման, այդ թվում՝ պարենային և ոչ պարենային ապրանքների, հանրային սննդի ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներ, լաբորատոր փորձարկումներ: Սույն հաշվետվությունն ընդգրկում է նշված ոլորտներում Ինստիտուտի կողմից 2017թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեությունը, Ինստիտուտի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերափոխումների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է իր կանոնադրությամբ և հետևյալ հիմնական իրավական ակտերով՝

1. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք
2. «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենք
3. «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենք
4. ՀՀ կառավարության 16.12.2010թ. թիվ 1693-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման 2010-2020թթ. ռազմավարությամբ»
5. «Ստանդարտների մշակման ծառայությունների ծրագիրը և ստանդարտացման աշխատանքների ցանկը հաստատելու մասին» ամենամյա ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրամաններով (օրինակ՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի ապրիլի 27-ի N 395-Ա հրաման)
6. ՀՀ կառավարության 26.02.1998թ. «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին» թիվ 116 որոշում
7. ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության ամենամյա մրցանակների շնորհման կարգը հաստատելու մասին» N 890-Ն որոշում
8. Տեխնիկական կանոնակարգերը հաստատող ՀՀ կառավարության որոշումներ և այլն:  
Ստանդարտների ազգային ինստիտուտի ռազմավարական նպատակներն են՝

- Խթանել հայկական ապրանքատեսակների առևտուրը միջազգային շուկաներում,

- Երաշխավորել ազգային ստանդարտների շարունակական բարելավումը և համապատասխանեցումը փոփոխվող պահանջներին,
- Բարձրացնել ազգային ստանդարտների ընկալումը, ճանաչումը և կիրառումը,
- Բացահայտել և լուծումներ առաջարկել այն ազգային խնդիրների վերաբերյալ, որոնք կարող են կարգավորվել ստանդարտների և համապատասխանության գնահատման ընթացակարգերի միջոցով:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որը միջազգային շրջանակներում հայտնի է իր «SARM» հապավումով, այն է՝ «Հայաստանի ստանդարտներ», իր մեջ ներառում է գործունեության հետևյալ հիմնական ծառայությունները.

- Ստանդարտացման, այդ թվում՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարման ծառայությունները,
- Համապատասխանության հավաստման (սերտիֆիկացման), այդ թվում՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման ծառայությունները,
- Պարենային և ոչ պարենային ապրանքների, այդ թվում՝ նավթամթերքի և էլեկտրատեխնիկական լաբորատոր փորձարկումները:

Գործունեության կարևորագույն ուղղություններից է ստանդարտացման ոլորտում միջազգային համագործակցությունը: Ստանդարտների ազգային ինստիտուտը 1997թ-ից ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը **ԻՍՕ (ISO) միջազգային ստանդարտացման կազմակերպությունում լիիրավ անդամի** և 2008 թվականի հունվարի 1-ից **ՍԵՆ (CEN) Ստանդարտացման Եվրոպական կոմիտեում՝ գործընկեր ստանդարտացման մարմնի (Companion Standardization Body)** կարգավիճակով: Միաժամանակ ակտիվորեն մասնակցում է ԻՍՕ-ի և ՍԵՆ-ի տեխնիկական հանձնաժողովների և ենթահանձնաժողովների աշխատանքներին:

Ստանդարտների ազգային ինստիտուտը, որպես ստանդարտացման ազգային մարմին 1992թ.-ից անդամակցում և մասնակցում է ԱՊՀ մասնակից-պետությունների **Սրանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի (ՍՉՍ ՄՊԽ)** ստանդարտացման կոմիտեների աշխատանքներին:

Ինստիտուտի գործունեության ուղղություններում կարևոր տեղ են զբաղեցնում ազգային (ՀՍ), միջպետական (ԳՕՍՍ) ստանդարտների մշակումը և փորձաքննությունը, միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների նախագծերի փորձաքննության կազմակերպումը, ազգային ստանդարտների նախապատրաստումը և ընդունումը, ինչպես նաև ստանդարտացման բնագավառի գիտա-մեթոդական աշխատանքները: Ինստիտուտը կորդինացնում է ՀՀ տարածքում գործող ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքները:

Ստանդարտների ազգային ինստիտուտը ձևավորում և վարում է Հայաստանի Հանրապետության ստանդարտների ազգային ֆոնդը, որը համալրված է շուրջ 35000 միավոր ստանդարտացման փաստաթղթերով, այդ թվում՝ միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ), միջպետական (ԳՕՍՍ), Հայաստանի Հանրապետության ստանդարտներով (ՀՍ) և այլ պետությունների ստանդարտներով:

Ազգային ֆոնդի վարման և տեղեկատվության ապահովման աշխատանքների ավտոմատացման նպատակով ՀՀ-ում գործող ստանդարտների մատենագիտական տվյալների հիման վրա 1993թ. հետո ստեղծվել և ներդրվել է տեղեկատվական որոնման էլեկտրոնային

համակարգ “SARM”, որը հնարավորություն է տալիս կազմակերպություններին և անհատներին փնտրել և տեղեկություններ ստանալ իրենց գործունեության համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերի վերաբերյալ:

Ինստիտուտն ունի հավատարմագրված արտադրանքի, ծառայությունների և կառավարման համակարգերի (ԻՍՕ 9000, ԻՍՕ 14000 և ԻՍՕ 22000) սերտիֆիկացման մարմիններ, որոնք իրականացնում են նշված ոլորտների համապատասխանության հավաստման աշխատանքներ, ինչպես նաև լայն անվանացանկի արտադրատեսակների փորձարկումներ:

Ընկերությունը կազմակերպում է առանձին ստանդարտարտոնների կիրառման վերաբերյալ հետաքրքրված անձանց ուսուցում:

Ստորև ներկայացվում են Ինստիտուտի գործունեության վերաբերյալ որոշ հակիրճ տեղեկություններ:

## SARM-ը թվերով

<p>Ստանդարտացման ազգային (հայելային) տեխնիկական հանձնաժողովները (ՏՀ)</p>	<ul style="list-style-type: none"> <li>- 26 ՏՀ-ներ, որոնց կազմում ընդգրկված են ավելի քան՝ <ul style="list-style-type: none"> <li>- 450 փորձագետ</li> <li>- 250 շահագրգիռ կազմակերպություններ (պետական մարմիններ, մասնավոր և հասարակական կազմակերպություններ, այլ)</li> <li>- 100 ՏՀ և ԱԽ նիստ և քննարկում՝ տարեկան</li> </ul> </li> <li>- Ազգային ՏՀ-ները հանդիսանում են հայելային ՏՀ-ներ՝ <ul style="list-style-type: none"> <li>- 37 ԻՍՕ ՏՀ-ների (լիիրավ)</li> <li>- 26 ԻՍՕ ՏՀ-ների (դիտորդ)</li> <li>- 3 ՍԵՆ ՏՀ-ների մասնակից</li> <li>- 18 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների</li> <li>- 1 ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ ՏՀ-ների (դիտորդ)</li> </ul> </li> </ul>
--	---

<p>Բաժանորդներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- 30 կազմակերպություն,</li> <li>- մշտական խորհրդատվություն՝ ոլորտային ստանդարտների վերաբերյալ</li> </ul>
--------------------	---

<p>ՀՀ ստանդարտների մշակումը 2017թվականին</p>	<p><u>Ազգային գործող ստանդարտներ՝</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- <b>Չուտ ազգային (ՀՍ)</b>՝ 10 հատ,</li> <li>- <b>Միջազգայինից փոխակերպված՝</b> 37 հատ - ՀՍ ԻՍՕ – 37 հատ</li> <li>- <b>Եվրոպականից փոխակերպված (ՀՍ ԵՆ)</b>՝ 8 հատ, որից ՀՍ ԵՆ – 5 հատ, ՀՍ ՍԵՆ 3,</li> <li>- <b>Միջպետական ստանդարտներ՝</b> 411 հատ, որից ԳՕՍՍ - 327 հատ, ԳՕՍՍ ԵՆ - 24 հատ, ԳՕՍՍ ԻՍՕ - 58 հատ, ԳՕՍՍ ԻԷԿ - 2 հատ</li> <li>- <b>Ռուսաստանի Դաշնության ստանդարտներ՝</b> 5 հատ - ԳՕՍՍ Ռ – 5 հատ</li> </ul> <p><b>Ընդամենը՝ 471 հատ</b></p>
--	--

<p>Ընդհանուր 1993-2017 թթ ընթացքում</p>	<p><u>Ազգային գործող ստանդարտներ՝</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- <b>Չուտ ազգային (ՀՍ)</b>՝ 386 հատ</li> <li>- <b>Միջազգայինից փոխակերպված՝</b> 502 հատ <i>այդ թվում՝</i> ՀՍ ԻՍՕ - 465, ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ - 34, ՀՍ ԻԷԿ - 1, ՀՍ ՕՀՍԱՍ - 1, ՀՍ ԱՍՍՄ - 1</li> <li>- <b>Եվրոպականից և այլ երկրներից փոխակերպված՝</b> 234 <i>այդ թվում՝</i> ՀՍ ԵՆ 226, ՀՍ ՍԵՆ – 5, ՀՍ ԵՏՍԻ - 2, ՀՍ ԱՆՍԻ - 1,</li> </ul>
---	--

**-Միջպետական ստանդարտներ (ԳՕՍՏ)՝ 4890 հատ, որից՝**

ԳՕՍՏ - 3862,  
ԳՕՍՏ ԻՍՕ - 402,  
ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ - 7,  
ԳՕՍՏ ԵՆ - 232,  
ԳՕՍՏ ԻԷԿ - 362,  
ԳՕՍՏ ՍԻՄՊՌ - 3,  
ԳՕՍՏ ՕԻՄԼ - 2  
ՀՍ ԳՕՍՏ - 20,

**(ԳՈՍՏ Ռ) 891 հատ, որից**

ԳՕՍՏ Ռ - 740,  
ԳՕՍՏ Ռ ԻՍՕ - 65,  
ԳՕՍՏ Ռ ԻՍՕ/ԻԷԿ - 2,  
ԳՕՍՏ Ռ ԻԷԿ - 57,  
ԳՕՍՏ Ռ ԵՆ - 27

**Ընդամենը՝ 6903 ազգային ստանդարտ**

Համագործակցություն

ՍԱՐՄ-ը անդամակցում է՝  
**ԻՍՕ**-ին 1997թ.-ից (լիիրավ)  
**ՍԵՆ**-ին 2007 թ.-ից գործընկեր, իսկ 2008 թ.-ից միացող անդամ  
**ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ** ստանդարտացման բյուրոին 1992թ.-ից

Տեխնիկական  
ինֆորմացիայի  
էլեկտրոնային  
հասանելիությունը

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ ստանդարտացման  
գործունեության ողջ ինֆորմացիան հասանելի է առցանց  
[www.sarm.am](http://www.sarm.am) հասցեով:  
Օգտվողները այստեղ կարող են գտնել.  
- ստանդարտների կիրառման վերաբերյալ տվյալներ  
- ստանդարտների նախագծեր

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 1.1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2017 թվականի ընթացքում «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (այսուհետ՝ ՍԱԻ) գործունեությունն ուղղված է եղել ֆինանսա-տնտեսական արդյունքների բարելավմանը և ինստիտուցիոնալ խորը վերափոխումների իրականացմանը: 2017 թվականի սկզբին ստեղծվել էր մի իրավիճակ, երբ առկա աշխատակազմի կառուցվածքը և հաստիքային միավորների քանակն իրականում չէին համապատասխանում գործունեության ծավալներին, առկա էր զգալի անշարժ գույք, որը չէր օգտագործվում ՍԱԻ գործունեության նպատակներով, սակայն պահանջում էր պահպանմանն ուղղված զգալի ծախսեր, իսկ համախառն հասույթը չէր բավարարում գոյացող նորանոր պարտավորությունների մարմանը:

Առկա ցուցանիշների և իրավիճակի վերլուծության հիման վրա մշակվեց և ՀՀ տնտեսական զարգացման ու ներդրումների նախարարի քննարկմանը ներկայացվեց նոր քիզնես մոդել: Նոր մոդելով սահմանվեց ՍԱԻ ընկերության նոր կառուցվածք և հաստիքացուցակ, որի շնորհիվ հաջողվեց տնտեսել զգալի գումարներ: Մյուս քայլն էլ՝ ՍԱԻ սեփականության զգալի գույքային համալիրների օտարումն էր, որոնք չէին օգտագործվում ընկերության կանոնադրական նպատակներով: ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 07-ի թիվ 1113-Ա որոշման համաձայն՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 94 հասցեում գտնվող՝ 956.33 քառ. մետր շենքի, 479,1 քառ. մետր շինությունների և 0,336 հեկտար հողամասի և Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի 68 հասցեում գտնվող՝ 1554.14 քառ. մետր շենքի, 130,89 քառ. մետր մակերեսով շինությունների և 0,182925 հեկտար հողամասի սեփականության իրավունքը փոխանցվեց պետությանը՝ համապատասխանաբար նվազեցնելով Ընկերության կանոնադրական կապիտալի չափը: Թեև, գույքային համալիրի օտարումից ՍԱԻ որևէ ֆինանսական միջոցներ չհատկացվեցից, այդուհանդերձ, նշվածը թույլ տվեց Ընկերությանը կրճատել տվյալ գույքի պահպանմանն ուղղվող անհարկի ծախսերը:

Վերափոխումների ներկայիս փուլով նախատեսվում է սահմանել և իրականացնել 2018-2020թթ. գործարար ծրագիր, որով կհստակեցվեն մատուցվող ծառայությունների տեսակները ու դրանց ֆինանսավորման հնարավորությունները, կապահովվի Ընկերության ֆինանսական կայունությունը և մատուցվող ծառայությունների շահութաբերությունը:

Այս առումով, հատկապես կարևորվում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանի գլխավորությամբ 2017 թվականի դեկտեմբերի 19-ին կայացած Ստանդարտացման ազգային մարմնի Կառավարման խորհրդի նիստը: Նիստին նախորդեց ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 23-ին N1003-Ա հրամանով Կառավարման խորհրդի նոր կազմի հաստատումը, որը լիովին բխում է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Նոր կազմով Կառավարման խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը: Նիստում քննարկվեց և ընդունվեց Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ կառուցվածքը, հաստիքացուցակը, ծախսերի և եկամուտների 2018 թվականի նախահաշիվը:



Նիստի ընթացքում քննարկվեց ՍԱԻ կողմից շահութաբաժինների գծով կուտակված պարտավորությունների ներման և շահութաբաժինների վճարման պարտավորությունից հետագա ազատման խնդիրը՝ ռազմական արդյունաբերության ոլորտում ստանդարտացման աշխատանքների արդյունավետ կազմակերպման ծախսերի փոխհատուցման նպատակով: Խորհուրդը նպատակահարմար համարեց այդ հարցով համապատասխան ՀՀ կառավարության որոշման նախագծի նախապատրաստումը և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը: Խորհուրդը որոշեց հաջորդ նիստը կազմակերպել 2018 թվականի մարտ ամսվա ընթացքում:

## 1.2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը ենթարկվեցին փոփոխությունների, որոնք ուղղված էին ընկերության գործունեության արդյունավետության բարձրացմանը, հաստիքացուցակի վերանայմանը և աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի կրճատմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2017 թ.-ի ապրիլի 19-ի N 350-Ա հրամանով հաստատվեց Ինստիտուտի նոր կառուցվածքը և հաստիքացուցակը:

Նոր հաստիքացուցակով նախատեսվեց 69 հաստիք՝ նախկին 117 հաստիքի փոխարեն: Միաժամանակ, հաստիքների համար նախատեսված աշխատավարձի դրույքաչափերը մասնակիորեն ենթարկվեցին փոփոխության՝ միայն ղեկավար պաշտոնների մասով:

Հաշվետու ժամանակամիջոցում Ինստիտուտն աշխատանքներ է իրականացրել կադրային ու փաստաթղթաշրջանառության գործունեության կազմակերպման ոլորտում, ինչը կապված էր ընկերության նոր կառուցվածքի և հաստիքացուցակի սահմանման հետ:

Մշակվել և հաստատվել են բոլոր հաստիքների նոր պաշտոնական հրահանգները և բոլոր ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերը:

Աղյուսակ 1-ում բերվում է ՍԱԻ ընկերության հաստիքային աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի 2013-2017թթ. դինամիկան:

### Աղյուսակ 1

#### Ինստիտուտի հաստիքային աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի 2013-2017թթ. դինամիկան

		2013	2014	2015	2016	2017
1.	Հաստիքային աշխատողների միջին թվաքանակ, մարդ	122	112	115	113	84
2.	Միջին աշխատավարձ, դրամ	113675	117180	135211	143826	162670

## 1.3. ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### 1. ՀՀ կառավարության 2016 թվականի մրցանակաբաշխություն

Մարտի 3-ին անցկացվեց ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի և «Համազգային

վստահություն» խորհրդի կողմից կազմակերպված արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության 2016 թվականի մրցանակաբաշխությունը:

Մրցանակաբաշխությունն անց է կացվում հանրապետությունում արտադրանքի և ծառայությունների որակի բարձրացումը խթանելու, դրանց որակի կառավարման արդյունավետ մեթոդների ներդրմանն աջակցելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 26 փետրվարի 1998 թվականի N 116 որոշմամբ սահմանված կարգով:

Մրցանակաբաշխության արարողության մարտի 3-ին (հայ նշանավոր գործարար և բարեգործ Ալեքսանդր Մանթաշյանցի ծննդյան օրը) անցկացումը պայմանավորված էր հանրապետությունում գործարարի օրվա ավանդույթի ներդրման անհրաժեշտությամբ, և նպատակ էր հետապնդում խթանել հայրենական արտադրության մասնակցությունը ստանդարտացման աշխատանքներին, ինչպես նաև՝ ազգային ստանդարտների ներդրումը հայրենական արտադրություններում:

Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Էմիլ Տարասյանը, Ռուսաստանի Արդյունաբերողների և Գործարարների Միության Տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման և համապատասխանության գնահատման կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Անդրեյ Լոցմանովը, Եվրոպական ստանդարտացման կոմիտեի (CEN) փոխնախագահ, Սլովենիայի ստանդարտացման ինստիտուտի (SIST) նախագահ Բոգդան Տոպիչը, Համազգային վստահություն խորհրդի նախագահ Աստղիկ Խաչատրյանը, «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն Ենոք Ազարյանը, մրցանակների արժանացած կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Հայաստանի խոշոր և միջին բիզնեսի մի շարք ներկայացուցիչներ:

Մրցանակաբաշխության արարողությանը ներկա էր նաև Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Համազգային վստահություն» խորհրդի փորձագետներից կազմված համատեղ հանձնաժողովի գնահատմամբ ընտրված կազմակերպություններին շնորհվեցին առանձին մրցանակներ՝ ստանդարտացման բնագավառում նշանակալի դերակատարման և ակտիվ մասնակցության համար:

## **2. Համագործակցության հուշագիր Սլովենիայի ստանդարտացման ինստիտուտի (SIST) հետ**

Մարտի 2-4-ին Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանի հրավերով Հայաստան այցելեց Սլովենիայի ստանդարտացման ինստիտուտի (SIST) նախագահ Բոգդան Տոպիչը՝ երկուստեք համագործակցության ուղղությամբ բանակցելու և ՀՀ կառավարության 2016 թվականի մրցանակաբաշխությանը մասնակցելու նպատակով: Սլովենիայի ստանդարտացման ինստիտուտի (SIST) նախագահ Բոգդան Տոպիչը և Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանը մարտի 3-ին ք.Երևանում ստորագրեցին Հայաստանի Ստանդարտների ազգային ինստիտուտի և Սլովենիայի ստանդարտացման ինստիտուտի միջև ստանդարտացման բնագավառում Համագործակցության հուշագիր: Հուշագիրն ուղղված է լինելու երկու երկրների միջև առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը: Կողմերը մանրամասն քննարկեցին հուշագրի իրագործման հնարավորությունները և ապագա անելիքները:

## **3. Համագործակցության հուշագիր ASTM International-ի հետ**

Հայաստանի Ստանդարտների ազգային ինստիտուտի (SARM) և Փորձարկումների ու նյութերի ամերիկյան կազմակերպության (ASTM) միջև 2017 թվականի մայիսի 5-ին կնքվեց

համագործակցության հուշագիր, ինչը հնարավորություն կտա միջազգայնորեն ճանաչված կազմակերպության կողմից մշակված ստանդարտները ներդնել Հայաստանի Հանրապետությունում:

Կազմակերպությունը հիմնադրվել է ԱՄՆ-ում 1898 թվականին: Նախապես զբաղվել է երկաթուղային տրանսպորտի ոլորտի ստանդարտների մշակմամբ: Ներկայումս ASTM International-ի կողմից մշակվում և հրատարակվում են նյութերի, արտադրանքի, համակարգերի և ծառայությունների ոլորտի ստանդարտներ: Հրատարակված ստանդարտների թիվը անցում է 12000-ից, որոնցից շուրջ 5000-ը ընդունված են ԱՄՆ սահմաններից դուրս և շուրջ 60 երկրում կիրառվում են որպես հիմք ազգային նորմատիվային փաստաթղթերի մշակման համար:

Ներկայումս կազմակերպությանն անդամակցում է շուրջ 100 երկրի 32000 ներկայացուցիչ՝ արտադրությունից, սպառողներից, պետական կառավարման մարմիններից և գիտակրթական կազմակերպություններից:

#### **4. 2017 թվականի ԻՍՕ շաբաթը Բեռլինում, Գերմանիա**

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը՝ տնօրեն Ե.Ազարյանի գլխավորությամբ 2017 թվականի սեպտեմբերի 18-22-ին մասնակցեց Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում տեղի ունեցած ԻՍՕ-ի տարեկան ավանդական միջոցառումներին, որոնք հյուրընկալվեցին Գերմանիայի Ստանդարտացման Ինստիտուտի (DIN) կողմից: Ի դեպ, ԻՍՕ շաբաթը Բեռլինում պատահակ չէ, որ անցակցվեց, քանի որ նշվում էր ԴԻՆ-ի հիմնադրման 100-ամյակը:

Նկատենք, որ Հայաստանի Հանրապետությունը 1997 թվականից հանդիսանում է ԻՍՕ-ի լիիրավ անդամ, որին անդամակցում է 162 երկիր: Ստանդարտների ազգային ինստիտուտը ներկայումս մասնակցում է 61 տեխնիկական հանձնաժողովների և 3 քաղաքականության մշակման մշտական հանձնաժողովների՝ ԿԱՍԿՈ, ԴԵՎԿՈ և ԿՈՊՈԼԿՈ աշխատանքներին: 2014 թվականին Ստանդարտների ազգային ինստիտուտը ԻՍՕ-ի վեհաժողովի կողմից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվել է ԻՍՕ Խորհրդի անդամ՝ 2015-2017 թվականների ժամանակահատվածի համար:

Այս տարվա ԻՍՕ շաբաթվա համար ընտրվել էր՝ «Շրջահայաց. Փոփոխություններին ընդառաջող» կարգախոսը (Open minded. Open for change.), որն, ըստ էության, ընդգծում էր նոր տեխնոլոգիական զարգացումներին ու ապագայի երիտասարդ սերնդի նոր մտածելակերպին արագ հարմարվելու անհրաժեշտությունը:

Ընդհանուր առմամբ, ԻՍՕ-ի շաբաթն ընդգրկեց հետևյալ միջոցառումները՝

1. Հոկտեմբերի 18-ին տեղի ունեցավ ԻՍՕ Խորհրդի նիստը,
2. Հոկտեմբերի 19-ին տեղի ունեցավ Զարգացող երկրների հարցերով մշտական կոմիտեի (ԴԵՎԿՈ) 51-րդ պլենար նիստը
3. Հոկտեմբերի 20-21 տեղի ունեցավ ԻՍՕ 40-րդ հրեյանական Վեհաժողովը,
4. Հոկտեմբերի 22-ին կազմակերպվեց բաց նիստ՝ առանձին տեխնոլոգիապես նորարական կենտրոններ այցելելու հնարավորությամբ:

Ստանդարտների ազգային ինստիտուտի պատվիրակությունը պատշաճ և ակտիվ մասնակցություն ապահովեց բոլոր միջոցառումներում: Վեհաժողովի ընթացքում ԻՍՕ պաշտոնատար անձնաց կողմից հաշվետվություններ ներկայացվեցին վերջին 1 տարվա զարգացումների վերաբերյալ: Ներկայացվեց վերջերս ԻՍՕ Խորհրդի կողմից ընտրված նոր ԻՍՕ գլխավոր քարտուղարը: Առանձին ելույթներով հանդես եկան ԴԵՎԿՈ նախագահը, ԻՍՕ ակադեմիայի տնօրենը, ԻՍՕ նախագահը, ԻՍՕ գլխավոր քարտուղարը, ԻՍՕ փոխնախագահները:

Վեհաժողովի հիմնական սրահին կից՝ նախասրահում բացվել էր «Բաց Գոտի» անվանումով հետաքրքիր հարթակ, որտեղ ներկայացվում էին ստանդարտացման ոլորտի վերջին մտահղացումները և միաժամանակ մասնակիցների շրջանում հարցումներ էին իրականացվում ստանդարտացման գերակա ոլորտների, ապագա զարգացումների ու նախապատվությունների վերաբերյալ: Այդ հարթակում ԴԻՆ-ի մասնագետների կողմից ներկայացվեցին մի շարք չափազանց հետաքրքիր նոր հայեցակարգեր, որոնք առնչվում էին երիտասարդ սերնդի ներգրավմանը ստանդարտացման աշխատանքներին, տեխնիկական հանձնաժողովների աշխատանքի ապագա ձևաչափին և այլն:

Ընդհանուր առմամբ, ԻՍՕ 40-րդ վեհաժողովն անցկացվեց բարձր արդյունավետությամբ և արձանագրեց մի շարք էական ձեռքբերումներ, որոնք հետագայում էլ ավելի կբարձրացնեն ԻՍՕ միջազգային դերը և կնպաստեն ստանդարտացման համաշխարհային գործընթացների արդյունավետության աճին:

ՍԱԻ պատվիրակությունը մասնակցելով Բեռլինում ԻՍՕ շաբաթվան, առանձնակի հանդիպումներ ունեցավ ԻՍՕ-ի նախագահ պարոն Ժանգ Քսիաոզանգի, ԻՍՕ-ի նոր գլխավոր քարտուղար պրն Սերխիո Մուչիցուի, ԱՄՆ-ի Ամերիկայի ազգային ստանդարտների ինստիտուտի (ANSI) նախագահ և տնօրեն պարոն Ջոն Բիաթիայի, Գերմանիայի Ստանդարտացման ինստիտուտի (DIN) տնօրեն Քրիստոֆ Ուինտերհայթերի և փոխտնօրեն Ռուդիգեր Մարգարթի, Ռուսաստանի Դաշնության Ռուսաստանդարտի ղեկավար պարոն Ալեքսեյ Աբրամովի, ASTM International միջազգային ստանդարտացման ընկերության նախագահ Քեթի Մորգանի և փոխնախագահ Թերեզա Սենդրովսկայի, ինչպես նաև մի շարք այլ երկրների պատվիրակությունների հետ: Այդ առանձնազրույցների և քննարկումների արդյունքում, մասնավորապես, տեղի ունեցավ փորձի փոխանակում և քննարկվեցին երկուստեք համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

## **5. Ստանդարտների համաշխարհային օրը՝ հոկտեմբերի 14, 2017թ.**

Յուրաքանչյուր տարի հոկտեմբերի 14-ին ԻՍՕ, ԻԷԿ և ԻՏՈՒ կազմակերպությունների անդամները տոնում են Ստանդարտների համաշխարհային օրը, ինչը նպատակաուղղված է արժանին մատուցել հազարավոր փորձագետների աշխատանքին, որոնք մշակում են ազգային, տարածաշրջանային և միջազգային ստանդարտները: 2017 թվականի կարգախոսն է՝ «Ստանդարտները քաղաքները դարձնում են խելացի»:

Հոկտեմբերի 18-ին, ստանդարտների համաշխարհային օրվա կապակցությամբ Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից Երևանում, Արմենիա Մարիոթ հյուրանոցի դահլիճում կազմակերպվեց «Ստանդարտները քաղաքները դարձնում են խելացի» խորագիրը կրող միջոցառում: Միջոցառումը կոչված էր խթանելու ստանդարտացման աշխատանքները և ստանդարտների կիրառումը, որոնք ուղղված են կայուն զարգացման նպատակների ապահովմանը:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը: Իր խոսքում նախարար Կարայանը նշեց, որ Հայաստանի կառավարությունը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում հայրենական արտադրողներին հուզող խնդիրները, և մշակվող միջոցառումներն ու կիրառվող գործիքակազմը նպատակաուղղված են տեղական արտադրության, արտահանման ու տնտեսական զարգացման խրախուսմանն ու խթանմանը:

«Այս միջոցառումն առավելապես ուղղված է ստանդարտների դերի կարևորմանը, որոնք, ըստ էության, որակի ենթակառուցվածքի հիմնասյունն են ու առևտրի համաշխարհային լեզուն: 2017 թվականի կարգախոսը նվիրված է խելացի քաղաքների ստեղծման համար մշակված ու մշակվող ստանդարտներին: Դրանով իսկ համաշխարհային կոնտեքստում հստակ շեշտադրվում է խորացող ուրբանիզացիոն գործընթացների ու նորագույն թվային

տեխնոլոգիաների միջոցով խելացի կառավարման համակարգերի ապահովման անհրաժեշտությունը: Ակնհայտ է, որ խելացի քաղաքային ենթակառուցվածքների ստեղծումը խիստ կարևոր է: Ավելին՝ նոր տեխնոլոգիաների կիրառումը, ենթակառուցվածքների բարելավումը պահանջում են ներդրումների ներգրավում և իրենց հերթին նպաստում այդ վայրերի տնտեսական զարգացմանը: Միաժամանակ, բարելավված ենթակառուցվածքները Հայաստանը գրավիչ են դարձնում թե՛ նոր բիզնես նախաձեռնությունների և թե՛ տուրիզմի զարգացման համար: Դրանք նաև նպաստում են կյանքի որակի բարձրացմանը: Ստանդարտներն օգնում են քայլ առ քայլ, բայցև հետևողականորեն հասնել դրված նպատակների իրագործմանը»,- ասել է Սուրեն Կարայանը՝ իրենց մասնագիտական տոնի առթիվ շնորհավորելով ազգային ստանդարտացման գործընթացներում ներգրավված բոլոր մասնագետներին ու փորձագետներին և մաղթելով նրանց բեղմնավոր ստեղծագործ աշխատանք:

Միջոցառման ընթացքում պարզաներ ու շնորհակալագրեր են հանձնվել ստանդարտացման աշխատանքներում ու ստանդարտների կիրառման ոլորտում առավել ակտիվ դերակատարում ունեցած և նորարարական լուծումներով ու արտադրանքներով աչքի ընկած ընկերություններին: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ պետական կառավարման մարմինները և միջազգային կազմակերպությունները ներկայացնող պաշտոնատար անձիք, Հայաստանի որոշ քաղաքների քաղաքապետարանների ներկայացուցիչներ, հյուրեր այլ երկրների ստանդարտացման ազգային մարմիններից, ՌԴ գործարարների ու արդյունաբերողների միությունից, ինչպես նաև ԱՊՀ Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդից: Միջոցառմանը ներկայացվել է խելացի քաղաքների կայացմանն ուղղված միջազգային ստանդարտացման փորձը:

## **6. Որակի համաշխարհային օր**

Նոյեմբերի 18-ին, Ստանդարտների ազգային ինստիտուտի նախաձեռնությամբ և Համազգային վստահության խորհրդի հետ համատեղ «Դաբլ Թրի Հիլթոն» հյուրանոցում անցկացվեց Որակի համաշխարհային օրվան նվիրված միջոցառում, որը Հայաստանում անցկացվեց առաջին անգամ: Միջոցառմանը մասնակցեցին հանրապետության նշանավոր, առավել որակյալ արտադրանքով աչքի ընկնող և սպառողների վստահությունը վայելող կազմակերպություններ: Հրավիրված էին նաև արտասահմանյան հյուրեր, մասնավորապես՝ Ռուսաստանի արտադրողների և արդյունաբերողների միության, Ռուսաստանի որակի կազմակերպության, Եվրոպական որակի կազմակերպության ներկայացուցիչները:

Որակի Համաշխարհային Օրը (World Quality Day) ամենամյա միջոցառում է, որն անց է կացվում աշխարհի շատ երկրներում՝ նոյեմբերի երկրորդ հինգշաբթի օրը (2017թ.-ին՝ նոյեմբերի 9-ին): Այս օրվա հիմնադրման նախաձեռնողն է Որակի Եվրոպական կազմակերպությունը (EOQ)՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) աջակցությամբ: Որակի Համաշխարհային Օրը նշվել է դեռևս 1960 թվականից, սակայն պաշտոնապես այն հաստատվեց 1990 թվականին ՄԱԿ-ի կողմից: Վեց տարի անց, Որակի Եվրոպական կազմակերպությունը այդ շաբաթը որում գտնվում է նոյեմբերի երկրորդ հինգշաբթին, հայտարարեց Եվրոպական որակի շաբաթ:

Սա հատուկ օր է այն մասնագետների համար, որոնք աշխատում են որակի հսկողության ոլորտում: Նրանց աշխատանքի շնորհիվ աճում է սպառողների գրագիտության և արտադրանք վաճառողի, ծառայություն մատուցողի և աշխատանք կատարողի պատասխանատվության մակարդակը: Ժամանակակից պայմաններում որակի գործոնը վճռորոշ է դառնում ինչպես երկրի տնտեսության, այնպես էլ յուրաքանչյուր տարածաշրջանի և մեկ ձեռնարկության մրցունակության բարձրացման գործում: Իսկ դրա ապահովումն անհնար է առանց այնպիսի ոլորտների, ինչպիսիք են տեխնիկական կանոնակարգումը եւ ստանդարտացումը,

համապատասխանության հավաստումը եւ հավատարմագրումը, չափագիտությունը եւ փորձարկումը, ռեսուրսների խնայումը:

Որակի համաշխարհային օրվան նվիրված միջոցառման ընթացքում որակյալ արտադրանք և ծառայություններ առաջարկող մի շարք հայրենական տնտեսվարողներին հանձնվեցին մրցանակներ՝ Որակի համաշխարհային օրվա կապակցությամբ:

## **7. Ալեքսեյ Աբրամովի այցը Հայաստան**

2017 թվականի դեկտեմբերի 15-16 «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ հրավերով Երևան էր այցելել Ռուսստանդարտի պետ Ալեքսեյ Աբրամովը: Այցի ընթացքում քննարկվեցին երկկողմ համագործակցության խորացման մի շարք հարցեր: Մասնավորապես՝

1. Հայ-Ռուսական առևտրային հարաբերություններում տեխնիկական խոչընդոտների վերացմանն ուղղված աշխատանքների շարունակումը, գործարարներից ստացվող սերտիֆիկացման հարցերով առկա բողոքների կարգավորման քննարկումը:

2. Նավթամթերքի ոլորտում ՀՀ լաբորատոր կարողությունների հզորացման ու համալրման նպատակով Ռուսստանդարտի կողմից աջակցության հնարավորությունները:

3. Էներգախնայողության ոլորտում ՀՀ-ում լաբորատոր կարողությունների ստեղծման ու զարգացման նպատակով Ռուսստանդարտի կողմից աջակցության հնարավորությունները:

4. Տարածաշրջանային ստանդարտացման ինստիտուցիոնալ կարողությունների վերափոխման հնարավորությունները, ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման նպատակով տարածաշրջանային ստանդարտացման խթանման հնարավորությունները:

Դեկտեմբերի 16-ին Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն Ենոք Ազարյանի ուղեկցությամբ պարոն Աբրամովն այցելեց Ստանդարտների ազգային ինստիտուտի նավթամթերքի փորձարկման, էլեկտրատեխնիկական և սննդի լաբորատորիաները և ծանոթացավ լաբորատորիաների զինվածության ներկայիս մակարդակին, ինչպես նաև ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման նպատակներով լաբորատորիաների վերազինման կարիքներին: Պարոն Աբրամովն այցելեց նաև «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ լաբորատորիաներ և ուսումնասիրեց չափագիտության ոլորտում ՀՀ կարողությունները, ինչպես նաև ներկայիս զարգացման ու վերազինման կարիքները: Այցելություններից հետո պարոն Աբրամովն առանձնազրույց-քննարկում ունեցավ Ստանդարտների ազգային ինստիտուտի և Չափագիտության ազգային ինստիտուտի ղեկավարության հետ, որի ընթացքում մասնավորապես, քննարկվեցին տարածաշրջանային ստանդարտացման խթանման հնարավորությունները և մեխանիզմները, ինչպես նաև տարածաշրջանում չափագիտական համակարգի հետագա զարգացման մարտահրավերները և ՌԴ նախատեսված բարեփոխումներն այդ ոլորտում:

Ալեքսեյ Աբրամովին ընդունեց ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը: Հանդիպման ընթացքում պարոն Աբրամովը նշեց, որ երկկողմ առևտրային հարաբերությունների զարգացումն ու խորացումը մեծապես կախված է որակի ենթակառուցվածքի ինստիտուտների համագործակցությունից և շեշտեց, որ Ռուսստանդարտի և հայկական ինստիտուտների միջև համագործակցությունը խորը արմատներ ունի: Ընդ որում, Աբրամովը կարծիք հայտնեց, որ առևտրային հարաբերություններում սերտիֆիկատների ճանաչման և այլ տեխնիկական խնդիրներից զերծ մնալու համար շատ կարևոր է, որ երկու երկրների և ընդհանրապես ԵԱՏՄ երկրների լաբորատորիաների ու մարմինների միջև գոյություն ունենա փոխվստահության պատշաճ մակարդակ, ինչը թերևս հնարավոր է ապահովել միայն ընտրված պետական մարմինների միջոցով:

Ինչ վերաբերվում է ստանդարտացման զարգացմանը, ապա ներկայումս ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման ոլորտում ստանդարտների առավել արդյունավետ կիրառման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ԱՊՀ Ստանդարտացման, չափագիտության և

սերտիֆիկացման Միջպետական Խորհրդին կից ստեղծել նոր ստանդարտացման կառույց, որն առավել արդյունավետ ու ճկուն մեխանիզմների շնորհիվ կկարողանա ընդունել ու վերանայել տարածաշրջանային ստանդարտները: Այդ առումով ՌԴ նախաձեռնությամբ ստեղծվել է ԵԱՏՄ 5 երկրների Ստանդարտացման ազգային մարմինների ղեկավարների խորհուրդ, որը պետք է աստիճանաբար ապահովի ու առաջադրի ստանդարտացման զարգացման մեխանիզմները:

Նախարար Սուրեն Կարայանը ողջունեց պարոն Աբրամովի այցը Հայաստան: Նախարարը նշեց, որ Ռուսաստանի նախաձեռնությունները խիստ կարևորվում են և Հայաստանը լիովին սատարում ու աջակցում է այդ նախաձեռնություններին: Այդուհանդերձ, զարգացման ներկայիս կարիքները ստիպում են վերազինել լաբորատոր կարողությունները, ինչի համար ռուսական կողմի աջակցությունը խիստ գնահատելի կլինի: Նախարարը շեշտեց, որ Հայաստանը նաև լիովին սատարում է Ռուսաստանի տարածաշրջանային, այդ թվում՝ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման նպատակներով ստանդարտացման զարգացման տեսլականը: Այդուհանդերձ, կարևոր է համարվում նաև Եվրոպական ստանդարտների ներդրումը, քանի որ դրանք օժանդակում Եվրոպական շուկաներ արտադրանքի արտահանումը: Միաժամանակ, ռուսական ընկերությունները կարող են օգտագործել Հայաստանի հնարավորությունները՝ Եվրոպական շուկա դուրս գալու համար: Այդպիսի նախադրյալներ արդեն իսկ կան: Կողմերը պայմանավորվեցին պարբերաբար՝ փոխադարձ այցելությունների ժամանակ քննարկել երկկողմ համագործակցության խնդիրները և սատարել միմյանց նոր նախաձեռնություններին:

## **8. Երևանի քաղաքապետարանն արժանացել է ISO 9001 որակի կառավարման համակարգի սերտիֆիկատի**

Երևանի քաղաքապետարանն արժանացել է միջազգային հեղինակավոր «Top Ten Award» կազմակերպության կողմից ISO 9001:2015 «Որակի կառավարման համակարգ. Պահանջներ» միջազգային ստանդարտին համապատասխանության հավաստագրի: Երևանի ավագանու նիստի սկզբում, մինչ օրակարգի հարցերին անցնելը, հավաստագիրը Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին է հանձնել Երևանի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Top Ten Award» կազմակերպության հայաստանյան գործընկեր «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն Ենոք Ազարյանը:

Փորձագետների կողմից Երևանի քաղաքապետարանին կառավարման համակարգի ISO 9001:2015 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխանության հավաստագրի շնորհումը, ըստ Ենոք Ազարյանի, կայացվել է Երևանի քաղաքապետարանում իրականացված ISO 9001 ստանդարտի պահանջների կատարման աուդիտի արդյունքում: Հարկ է նշել, որ 2014-ին Երևանի քաղաքապետարանին արդեն շնորհվել էր կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխանության հավաստագիր: «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրենը նաև տեղեկացրել է, որ աշխարհի զարգացած երկրներն ու քաղաքներն իրենց տնտեսությունն ու կառավարման համակարգերը ձգտում են համապատասխանեցնել միջազգային ISO 9001 ստանդարտին, քանի որ այն սահմանում է գործունեության կազմակերպման առավել արդյունավետ մեխանիզմներ ու սկզբունքներ:

Շնորհակալություն հայտնելով հեղինակավոր միջազգային կազմակերպության կողմից բարձր գնահատականի առթիվ՝ քաղաքապետ Տարոն Մարգարյանն ընդգծել է, որ ISO 9001:2015 հավաստագրին Երևանի քաղաքապետարանի արժանանալը 2013-2017

թվականների ընթացքում կառավարման համակարգերի ներդրման ուղղությամբ քաղաքապետարանի ամբողջ աշխատակազմի հետևողական ջանքերի արդյունքն է: Քաղաքապետը նաև նշել է, որ կառավարման համակարգի համապատասխանեցումը ISO 9001 պահանջներին քաղաքն առավել հրապուրիչ է դարձնում ներդրումային առումով, թույլ է տալիս հնարավորինս արդյունավետ արձագանքել մայրաքաղաքի առջև ծառայող մարտահրավերներին, ժամանակին ու հասցեական լուծումներ առաջադրել մայրաքաղաքի բնակիչների կողմից բարձրացվող խնդիրներին:



## 2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

### 2.1. ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ստանդարտների ազգային ինստիտուտը հետևողականորեն իրականացրել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017թ. ապրիլի 27-ի N 395-Ա «Ստանդարտների մշակման ծառայությունների 2017 թվականի ծրագիրը, ստանդարտացման 2017 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» հրամանով և դրա հիման վրա 2017 թվականի մայիսի 17-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության միջև կնքված N 21-17 պայմանագրով նախատեսված ստանդարտների մշակման աշխատանքները:

Ինստիտուտը ստանդարտացման աշխատանքներն իրականացրել է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հետ համատեղ: Մշակման գործընթացում մասնակցել են համապատասխան ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները՝ միաժամանակ գնահատելով ՀՀ-ում միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների կիրառման նպատակահարմարությունը՝ ազգային ստանդարտների կարգավիճակով: Ազգային ստանդարտները մշակվել են վերահրատարակման և հավանության եղանակներով:

Ի կատարումն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017թ. ապրիլի 27-ի N 395-Ա «Ստանդարտների մշակման ծառայությունների 2017 թվականի ծրագիրը, ստանդարտացման 2017 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» հրամանի և դրա հիման վրա 2017 թվականի մայիսի 17-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության միջև կնքված N 21-17 պայմանագրի՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտներին ներդաշնակ թվով 55 ազգային ստանդարտների նախագծերի մշակման աշխատանքներ, որոնք ընդունվել և հաստատվել են Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի հրամանով:

Մշակվել են ազգային ստանդարտներ ՀՀ տնտեսության գերակայող հետևյալ ճյուղերում՝ շինարարություն, ռազմաարդյունաբերություն, բնապահպանություն, սննդամթերքի և գյուղատնտեսական մթերքի արտադրություն, համապատասխանության գնահատում, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլ ոլորտներում:

### 2.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ստանդարտների ազգային ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպել է ՀՀ ընկերությունների մասնակցությունը ԻՍՕ-ի 60 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի և ենթահանձնաժողովի աշխատանքներին:

Կազմակերպվել են միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկության աշխատանքներ, որի ընթացքում 80 միջազգային ստանդարտների նախագծեր անցել են փորձաքննություն և համաձայնեցվել են ՀՀ-ում բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

ՍԱԻ կողմից իրականացվել են աշխատանքներ միջազգային ստանդարտացման կազմակերպության և նրա հանձնաժողովների հետ, ինչպես նաև ստանդարտացման եվրոպական կոմիտեի և նրա հանձնաժողովների հետ:

Իրականացվել են հետևյալ միջպետական ստանդարտացման աշխատանքները՝

1. կազմակերպվել և կատարվել է 277 միջպետական ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն,

2. կատարվել են ԱՊՀ երկրների Միջպետական ստանդարտացման խորհրդի (ՄՍԽ) շուրջ 42 հանձնարարականներ,

3. կազմակերպվել է 375 միջպետական ստանդարտների նախագծերի համաձայնեցում 57 ՀՀ շահագրգիռ կազմակերպությունների հետ,

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագրի նպատակն է ունենալ միջազգային, եվրոպական, միջպետական և այլ պետությունների, ինչպես նաև ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ և գործող ստանդարտների վերաբերյալ պատշաճ ու հավաստի տեղեկատվություն տրամադրել ձեռներեցներին, բիզնեսի ներկայացուցիչներին և պետական կառավարման մարմիններին:

### **2.3. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**

2017 թվականին Ստանդարտների ազգային ֆոնդը համալրվել է 2700 միջպետական (ԳՕՍՏ) և Ռուսաստանի Դաշնության (ԳՕՍՏ Ռ) և 55 Հայաստանի Հանրապետության (ՀՍ) նոր ստանդարտներով:

Ստանդարտների ազգային ինստիտուտն իրականացրել է նաև ՀՀ-ում ընդունված և գործող ստանդարտների էլեկտրոնային տարբերակների ստեղծման և կայքում տեղադրման աշխատանքներ՝ ստանդարտների էլեկտրոնային վաճառքի համակարգի ներդրման նպատակով:

2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության գործատուներին և մասնագետներին սպառիչ տեղեկատվություն ապահովելու համար հրատարակվել է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» թվով 4 տեղեկատուներ և պատրաստվել է ՀՀ կազմակերպությունների համար 12 տեղեկատվական թերթիկ՝ ազգային ֆոնդում համալրված բոլոր ստանդարտների վերաբերյալ, որոնք տրամադրվել են Ինստիտուտի բոլոր բաժանորդներին:

2017թ. Ինստիտուտը ՀՀ կազմակերպությունների հետ կնքել է 30 պայմանագիր՝ արձեռնարկային սպասարկման աշխատանքների իրականացման նպատակով:

Կատարված աշխատանքների արդյունքում կազմակերպություններին տրամադրվել են տեղեկատվական սպասարկման հետևյալ ծառայությունները.

- տեղեկատվության տրամադրում ազգային ֆոնդում միջազգային (ԻՍՕ, ԻԷԿ, ԵՆ), միջպետական (ԳՕՍՏ), Հայաստանի Հանրապետության (ՀՍ) և արտասահմանյան երկրների (այդ թվում՝ ԱՊՀ) ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի մասին,
- կազմակերպությունների ստանդարտների ֆոնդի արդիականացում,
- ՀՀ ստանդարտների ամենամյա կատալոգի, ստանդարտների և տեխնիկական պայմանների եռամսյակային տեղեկատուների տրամադրում,
- բաժանորդին անհրաժեշտ ազգային ստանդարտների անվճար տրամադրում (թվով 260),

- խորհրդատվություն ստանդարտացման և համապատասխանության գնահատման փաստաթղթերի վերաբերյալ:

Բաժանորդ կազմակերպություններին նշված ծառայությունների մատուցման արդյունքում Ստանդարտների ազգային ինստիտուտի հասույթը կազմել է **4960000 ՀՀ դրամ**:


Ի լրումն, հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է **1533200 դրամի** (թվով 254 հատ) ստանդարտների վաճառք՝ ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին:

2017թ. ըստ կնքված պայմանագրի ԼՂՀ ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման կենտրոնին տրամադրվել են 88 ստանդարտներ 213000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2011-2017թթ. քանակական և 2012-2017թթ. գումարային դինամիկան ներկայացված է գծանկարներ 1 և 2-ում:


**Գծանկար 1.**

**ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2011-2017թթ. քանակական դինամիկան**



**Գծանկար 2**

**ՀՀ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին ստանդարտների վաճառքի 2011-2017թթ. գումարային դինամիկան, հազ.դրամ**




Ինչպես երևում է ստանդարտների վաճառքի դինամիկայից, ստանդարտների վաճառքը նախորդ 2013-2016թթ համեմատ որոշակի աճ է արձանագրել:

Ինստիտուտը 2017 թվականի ընթացքում կատարել է կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների) փորձաքննություն և հաշվառում, որի հիմնական նպատակն է օգնել միջին և փոքր ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին մշակել կոնկրետ տեսակի արտադրանքի համար կազմակերպության ստանդարտներ (տեխնիկական պայմաններ)՝ համաձայն գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի և ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների պահանջներին:

2017թ. ընթացքում բաժինն իրականացրել է 168 կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների) և տեխնիկական պայմանների 116 փոփոխությունների փորձաքննության աշխատանքներ: Այդ աշխատանքներից ստացված հասույթը 2017 թվականին կազմել է **10898.2 հազ. դրամ**:

### Գծանկար 3.

#### Տեխնիկական պայմանների փորձաքննության աշխատանքներից հասույթը 2016-2017թթ.



### 3. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտում գործել են 3 հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ, այդ թվում՝

1. Լաբորատոր փորձարկումների կենտրոնի փորձարկման լաբորատորիան,
2. Էլեկտրատեխնիկական փորձարկումների լաբորատորիան,
3. Նավթամթերքի և ֆիզիկաքիմիական փորձարկումների լաբորատորիան:

Հարկ է նկատել, որ Հավատարմագրման ազգային մարմինը 2017 թվականի ապրիլից դադարեցրել է Գյումրու սննդի փորձարկման լաբորատորիայի հավատարմագրումը՝ գինվածության անբավարար մակարդակ ունենալու պատճառով:

#### 3.1. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Էլեկտրատեխնիկական փորձարկումների լաբորատորիան հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 138 հայտ, տրվել է 138 փորձարկման արձանագրություն: Իրականացվել են լաբորատորիայի հավատարմագրման հետ կապված աշխատանքները, որոնք դրական եզրակացություն են ստացել հավատարմագրման ազգային մարմնի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում լաբորատորիան սարքավորումների վերազինում չի ունեցել:

#### 3.2. ՍՆՆԴԻ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

Լաբորատոր փորձարկումների կենտրոնի Երևանի փորձարկման լաբորատորիան միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրակարգ սարքավորումներով հագեցված լաբորատորիա է:

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՓԿ փորձարկման լաբորատորիան ընդունել է սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների փորձարկման 1182 հայտ և տրվել են նույնքան փորձարկման արձանագրություններ:

#### 3.3. ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ


Այս լաբորատորիան տեղակայված է ք.Երևան, Հ.Էմինի 31ա տարածքում: Այն ունի միջին բավարար հագեցվածություն, ինչը թույլ է տալիս պատշաճ ձևով իրականացնել նավթամթերքների համար սահմանված պահանջների փորձարկումները:

Հաշվետու ժամանակաշրջանում նավթամթերքի փորձարկման լաբորատորիայում կատարվել է 861 փորձարկում, որից 861 համար տրվել է համապատասխանության եզրակացություն:

2018թ.-ի երկրորդ եռամսյակում փորձարկման լաբորատորիաները մասնակցելու են միջլաբորատոր փորձարկումներին:

Առկա են նաև մի շարք խնդիրներ կապված ստանդարտ նմուշների ձեռքբերման հետ, օդափոխության համակարգի արդիականացման հետ, լուսավորման և այլն:

Ինստիտուտի հավատարմագրված լաբորատորիաներում կատարված փորձարկումների քանակը 2014-2017թթ.



## 4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում հնստիտուտի կազմում հավատարմագրված սննդի և պարենային հումքի, ոչ պարենային ապրանքների, ծառայությունների և կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները (ՍՄ) շարունակել են իրականացնել համապատասխանության հավաստման աշխատանքներ: Ինստիտուտի սերտիֆիկացման մարմինների գործունեության ծավալներն շարունակում են գերակայել հանրապետությունում հավատարմագրված այլ ՍՄ նկատմամբ:

### 4.1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում տրվել են՝

#### **ա) ոչ պարենային ապրանքների գծով՝**

148 ներկրվող արտադրանքի և 119 տեղական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (ընդամենը՝ 267) (2016 թվականին՝ 196 ներկրվող արտադրանքի և 24 տեղական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ (ընդամենը՝ 220)),

921 ներկրվող արտադրանքի և 213 տեղական արտադրանքի համապատասխանության հայտարարագիր (ընդամենը՝ 1134) (2016 թվականին՝ 981 ներկրվող արտադրանքի և 74 տեղական արտադրանքի համապատասխանության հայտարարագիր (ընդամենը՝ 1055)),

իրականացվել է համապատասխանության հսկողություն 40 հատ (2016թ.-ին՝ 36 հատ), կատարվել է տեխնիկական պայմանների 28 փորձաքննություն, մերժում՝ 1 հատ (2016թ.-ին՝ 23 հատ, մերժում՝ 1 հատ):

Ոչ պարենային ապրանքների սերտիֆիկացման գծով 2017 թվականին ընդունվել է 1048 հայտ, 2016 թվականին՝ 936 հայտ:

#### **բ) սննդի և պարենային հումքի գծով տրվել են՝**

1564 (2016 թվականին՝ 1610 համապատասխանության հայտարարագիր) համապատասխանության հայտարարագիր, այդ թվում՝ 950 ներկրվող արտադրանքի և 614 տեղական արտադրության համար:

Տրվել է համապատասխանության սերտիֆիկատ 67 հատ (2016թ.-ին՝ 98 հատ), այդ թվում՝ 10 ներկրվող արտադրանքի և 57 տեղական արտադրության համար:

Իրականացվել է համապատասխանության հսկողություն՝ 13,

2017թ. ընդունվել է 1072 հայտ (2016թ.՝ 1089 հայտ):

#### **գ) ծառայությունների սերտիֆիկացման գծով՝**

տրվել է սննդի ապահովման ծառայության 84 (2016թ.՝ 92) համապատասխանության սերտիֆիկատ,

109 (2016թ.՝ 81) ընկերություններում կատարվել է սննդի ապահովման ծառայության համապատասխանության հսկողություն:

Ծառայությունների սերտիֆիկացման գծով 2017 թվականին ընդունվել է 79 հայտ, 2016 թվականին՝ 92:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և իրականացվել են արտադրանքի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման աշխատանքները:

Ընդհանուր առմամբ, Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից 2017 թվականի ընթացքում սերտիֆիկատների ձևակերպման և գրանցման կատարված աշխատանքների արդյունքները ներկայացվում են ստորև աղյուսակով.

## Աղյուսակ 2.

### 2016 թվականի և 2017 թվականի ընթացքում տրված սերտիֆիկատների և հայտարարագրերի քանակական համեմատական վերլուծությունը

ՀԳ փաստաթղթի տեսակը	2016թ	2017թ
ԵԱՏՄ համապատասխանության սերտիֆիկատներ	124	190
Ազգային և կամավոր համապատասխանության սերտիֆիկատներ	194	144
ԵԱՏՄ համապատասխանության հայտարարագրեր	2010	2185
Ազգային և կամավոր համապատասխանության հայտարարագրեր	655	513

#### 4.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Ինստիտուտի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից ընդունվել է կառավարման համակարգերի սերտիֆիկացման 22 (2016թ.՝ 20) հայտ:

23 (2016թ.՝ 17) կազմակերպություններում իրականացվել է կառավարման համակարգերի սերտիֆիկացում:

35 (2016թ.՝ 29) կազմակերպություններում իրականացվել են սերտիֆիկացված կառավարման համակարգերի համապատասխանության հսկողության աշխատանքներ:

14 կազմակերպություններում իրականացվել է սերտիֆիկատների վերաձևակերպում:

2017թ. համապատասխանության հսկողության արդյունքում մեկ սերտիֆիկացված կազմակերպության համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կասեցվել է:

Կազմակերպվել և իրականացվել են կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման աշխատանքները:

ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 26-ի «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին» թիվ 116 որոշման համաձայն կազմվել է 2017թ. միջոցառումների պլան:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ համատեղ վերանայվել է ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 26-ի «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա մրցանակներ սահմանելու և շնորհելու մասին» թիվ 116 որոշումը:



Հրատարակվել է «Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման» բնագավառում ՀՀ 2017թ. մրցույթի «Ձեռնարկ-Տեղեկատուն» և ուղարկվել են գրություններ ՀՀ պետական կառավարման մարմիններին, Մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամներին և հավակնորդ կազմակերպություններին:

Ապահովվել է պետական կառավարման մարմիններից համակարգի հավակնորդ կազմակերպությունների ցանկերի ստացումը և տեղեկատվության տրամադրումը:

2017թ. ընթացքում «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթով և Ստանդարտների ազգային ինստիտուտի [www.sarm.am](http://www.sarm.am) կայքով հանրությանը տեղեկացվել է 2017 թվականի արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում ՀՀ կառավարության մրցույթի անցկացման մասին:

Ներկայացվել է 2 հայտ: Մրցույթը չի կայացել հայտերի բացակայության պատճառով: 2017թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին կազմակերպվել են մրցույթներ՝ Ստանդարտացման և Որակի համաշխարհային օրվա կապակցությամբ:

## 5. ՍԱԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում ՍԱԻ հասույթը կազմել է **232,8 մլն դրամ**:

Աղյուսակ 3.

**2017 թվականի փաստացի եկամուտները և տարեկան կանխատեսումները, հազ. դրամ**

Ծառայության անվանումը	Կանխատեսում տարեկան	Ընդամենը (փաստացի)	Տարբերություն
Համապատ. հավաստման ծառայություններ	55000,0	39049.4	-15950.6
Պարենային և ոչ պարենային ապրանքների փորձաքննության կատարում	110000,0	113681.4	3681.4
Ծառայությունների սերտիֆիկացում	8000,0	6930.7	-1069.3
Որակի և էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացում	30000,0	44784.9	14784.9
Ստանդարտացման պետ. Պատվեր, ստ. Վաճառք, Տպ գրանցում, փորձաքննություն, Մասնագետների ուսուցում և վերապատրաստում	28000,0	28374.5	374.5
<b>Ընդամենը</b>	<b>231000,0</b>	<b>232820,9</b>	<b>1820.9</b>

Աղյուսակ 4.

**2017թ. փաստացի ծախսերը և տարեկան կանխատեսումները, հազ. դրամ**

Ծախսային հոդված	Կանխատեսում տարեկան	Փաստացի	Տարբերություն
Աշխատավարձ	155000,0	136644.4	-18355.6
Գրեն., տնտ., գրենակ., լաբ. նյութեր	3500,0	4890.2	1390.2
Ներկայացուցչական ծախսեր	2500,0	2400.0	-100.0
Տրանսպ. պահպանման ծախսեր	6000,0	5203.2	-796.8
Կապի ծառ., գրասենյակային	5000,0	3236.9	-1763.1
Էներգիա, գազ և կոմունալ այլ ծախսեր	11800,0	7740.1	-4059.9
Վարձավճար	1440,0	605.0	835
Գործուղման ծախսեր	13280,0	12693.0	-587.0
Այլ վարչական ծախսեր	9380,0	9063.7	-316.3
Մաշվածություն	12250,0	58836.6	-46586.6
Ընթացիկ վերանորոգում	1350,0	0	1350,0
<b>Ընդամենը</b>	<b>221500,0</b>	<b>241373,1</b>	<b>-19873.1</b>

Աղյուսակներ 3 և 4-ի հիմնական գործունեությունից ստացված փաստացի **եկամույրների** ու կատարված փաստացի **ծախսերի տարբերությունը կազմել է -8552.2 հազ. դրամ:**

**Գծանկար 5.**

**ՍԱԻ հիմնական գործունեությունից համախառն եկամտի 2013-2017թթ. դինամիկան, մլն.դրամ**

